Վիճակագրություն

1.Վիճակագրական դասակարգում

Ներածություն

Վիճակագրական դասակարգման բնագավառում ՀՀ օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ԵՄ օրենսդրությանը. բացառություն են կազմում վիճակագրական միավորների արտադրական համակարգի դիտարկման և վերլուծության միջոցառումներին վերաբերող հիմնահարցերը:

Վիճակագրական դասակարգման ԵՄ օրենսդրությունը սահմանում է տնտեսական գործունեության տեսակների և ըստ գործունեության տեսակների արտադրանքի դասակարգիչները, ինչպես նաև վիճակագրական միավորները՝ արտադրական համակարգում հետազոտություններ անցկացնելու նպատակով: Վիճակագրական դասակարգման բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությունն ընդգրկում է ՀՀ-ում վիճակագրության բնագավառում տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի ՏԳՏԴ-ի և «արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգչի պարտադիր կիրառման հանգամանքը[1] :

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ԵՄ–ում տնտեսական գործունեության և արտադրանքի դասակարգիչների կիրառման համար սահմանված կանոններից բխող գործառույթներն ավելի մանրամասնված են[2]: ՀՀ-ում արդյունաբերության բնագավառի վիճակագրությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերը հիմնականում վերաբերում են տվյալների հավաքմանը, այնինչ ԵՄ-ում առկա են հստակ ուղղվածություն ունեցող կանոնակարգեր, որոնք համակարգում են այդ բնագավառում իրականացվելիք դիտարկումները և հետազոտությունները[3]:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Վիճակագրական դասակարգում» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

Նպատակ ունենալով մոտարկել ՀՀ-ում արտադրական համակարգում հետազոտությունների իրականացման մեթոդաբանությունը ԵՄ չափանիշներին՝ ՀՀ վիճակագրական պետական խորհուրդը (այսուհետ՝ ՀՀ ՎՊԽ) կմշակի որոշման նախագիծ, որը հիմնված կլինի 1993թ. մարտի 15-ի թիվ 696 ԵՀ կանոնակարգի հիմնադրույթների վրա:

---

[1] [1] 6-Ն, 21.01.2005թ.:

[2] 1993թ. հոկտեմբերի 29-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 3696՝ «Եվրոպական տնտեսական միությունում ըստ գործունեության ոլորտների ապրանքների վիճակագրական դասակարգման (CPA) վերաբերյալ», 1990թ. հոկտեմբերի 9-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 3037՝ «Եվրոպական Համայնքում տնտեսական գործունեության վիճակագրական դասակարգման (NACE) վերաբերյալ»:

[3] 1993թ. մարտի 15-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 696՝ «Համայնքում արդյունաբերության ոլորտում դիտարկումների և հետազոտությունների համար վիճակագրական միավորների մասին»:

1.1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«ՀՀ արտադրական համակարգի դիտարկման և վերլուծության համար նախատեսված վիճակագրական միավորների մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նածագծի մշակում	1993 թ-ի մարտի 15-ի Եվրոհամայնքի արտադրական համակարգի դիտարկման և վերլուծության համար նախատեսված վիճակագրական միավորների վերաբերյալ» Եվրոպական Խորհրդի թիվ 696/93 կանոնակարգ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					30	

1.2.Ինստիտուցիոնալ կարողություններ[4]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն		ԵՄ վիճակագրական ենթակառուցվածքի /վիճակագրական դասակարգում, ներառյալ արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների/ վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.)	Խորհրդատվություն

[4] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

2. Վիճակագրության ենթակառուցվածք (դասակարգում)

Ներածություն

Սույն ոլորտին վերաբերող ՀՀ օրենսդրությունը չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը, Վիճակագրական դասակարգմանը վերաբերող ԵՄ օրենսդրությունը սահմանում է տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ վիճակագրական միավորների դասակարգիչը:

Այս բնագավառում ԵՄ օրենսդրությունը նախատեսում է նաև վիճակագրական տվյալներ հավաքագրելու նպատակով տարածքային միավորների դասակարգման հետ կապված խնդիրների կարգավորումը: Մասնավորապես, ԵՄ օրենսդրությունը նախատեսում է տարածքային միավորների դասակարգում ըստ սահմանված չափանիշների՝ ապահովելու համար այդ միավորների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրումը, կազմումը և տրամադրումը: Միևնույն ժամանակ ԵՄ օրենսդրությունը նպատակ ունի համադրելի դարձնել տարածքային բաժանումը ԵՄ տարբեր անդամ երկրներում՝ մշակելով միասնական մոտեցում: Հարկ է նշել նաև, որ համաձայն ԵՄ մոտեցման, տարածքային քաղաքականությունը իրականացվում է ըստ վերը նշված բաժանման, ինչը հնարավորություն է տալիս լուծելու տնտեսական, ժողովրագրական և այլ խնդիրներ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Վիճակագրության ենթակառուցվածք (դասակարգում) ենթագլուխը մինչև 2009 թվականը տարածքային վիճակագրության վարման մասով ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

ՀՀ-ում տարածքային վիճակագրության իրականացման և համապատասխան դասակարգչի սահմանման նպատակով ՀՀ ՎՊԽ-ն կմշակի «ՀՀ վիճակագրության կարիքների համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգիչ հիմնելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագիծ՝ հիմք ընդունելով 2003թ. մայիսի 26-ի թիվ 1059 ԵՀ կանոնակարգի դրույթները:

2.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«ՀՀ վիճակագրության կարիքների համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգիչ (NUTS) հիմնելու» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագծի մշակում	2003 թ մայիսի 26-ի «Վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգիչ (NUTS) հիմնելու վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և Եվրոպական խորհրդի, թիվ 1059/2003 կանոնակարգ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		30	

2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[5]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն		ԵՄ տարածքային վիճակագրության վարման վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.)	Խորհրդատվություն

[5] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ:

.3. Վիճակագրական ենթակառուցվածք (տվյալների պահպանում և վիճակագրական գաղտնիություն)

Ներածություն

Վիճակագրական ենթակառուցվածքների՝ տվյալների պահպանմանը և վիճակագրական գաղտնիությանն առնչվող ՀՀ օրենսդրությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է ԵՄ օրենսդրությանը:

Տվյալների պահպանմանը և վիճակագրական գաղտնիությանը վերաբերող Եվրամիության օրենսդրությունը սահմանում է ԵՄ-ում վիճակագրական գաղտնիք համարվող տեղեկությունների պահպանման և օգտագործման հիմնական կանոնները:

Հիշյալ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով[6], «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին»[7] և «Վիճակագրական տեղեկատվության հրապարակման ձևերի մասին» ՀՀ ՎՊԽ ընդունած որոշումներով[8]:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ԵՄ կանոնակարգում ավելի մանրամասնորեն են նշված հիմնական հասկացությունների սահմանումները, ինչը ՀՀ նորմատիվ իրավական ակտում նույն մակարդակով նշված չէ: ԵՄ կանոնակարգում հստակ նշվում է նաև «միայն վիճակագրական նպատակներով» տվյալների օգտագործման հանգամանքը[9]: Գաղտնի տվյալների պահպանման մասով ԵՄ կանոնակարգում սահմանվում է «անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկատվություն» հասկացությունը, որը բացակայում է ՀՀ նորմատիվ իրավական ակտում: ՀՀ-ում տեղեկությունների անուղղակի բացահայտման եղանակը տարբերվում է ԵՄ-ում կիրառվող սկզբունքից[10]: Չնայած ՀՀ-ում կարգավորվում են գաղտնի տեղեկատվության պահպանման և տարածման հիմնահարցերը, այնուամենայնիվ, ՀՀ-ում առկա չէ առանձին նորմատիվ իրավական ակտ, որը հստակորեն կանոնակարգում է գիտական նպատակներով գաղտնի տեղեկատվության տրամադրումը և սահմանում է այն մարմինների ցանկը, որոնք իրավունք ունեն օգտվելու այդ տեղեկություններից[11]:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Վիճակագրական ենթակառուցվածք (տվյալների պահպանում և վիճակագրական գաղտնիություն)» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

ՀՀ-ում վիճակագրական գաղտնիք ներառող տեղեկությունների դասակարգման, պահպանման և օգտագործման հետ կապված հարաբերությունների հստակ կարգավորման նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքում և «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» Խորհրդի ընդունած որոշման մեջ, ինչպես նաև կմշակվի «Գիտահետազոտական աշխատանքների համար վիճակագրական նպատակներով գաղտնի տվյալներից օգտվելու իրավունք ունեցող կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագիծ:

Նշված միջոցառումների իրականացման հիմք են 1997թ. փետրվարի 17-ի, 1990թ. հունիսի 11-ի, 2002թ. մայիսի 17-ի և 2004թ. ապրիլի 29-ի ԵՀ թիվ 322, թիվ 1588, թիվ 831, թիվ 452 կանոնակարգերը:

---

[6] ՀՕ-48, 04.04.2000թ.:
[7] Թիվ 53, 25.06.2001թ.:
[8] Թիվ 60, 15.08.2001թ.:
[9] 1997թ. փետրվարի 17-ի Եվրոպական խորհրդի կանոնակարգ թիվ 322՝ «Եվրահամայնքի վիճակագրության մասին»:
[10] 1990թ. հունիսի 11-ի Եվրոպական խորհրդի (EURATOM, EEC) կանոնակարգ թիվ 1588՝ «Եվրահամայնքի վիճակագրական գրասենյակին վիճակագրական գաղտնիք պարունակող տվյալների փոխանցման մասին»:
[11] 2002թ. մայիսի 17-ի Եվրոպական խորհրդի կանոնակարգ թիվ 831՝ «Եվրոպական խորհրդի 322/97/EC կանոնակարգի կիրարկման նպատակով գիտահետազոտական աշխատանքների համար վիճակագրական նպատակներով գաղտնի տվյալների մատչելիության ապահովման մասին»: 2004թ. ապրիլի 29-ի Եվրոպական Հանձնաժողովի որոշում թիվ 452՝ «Գիտահետազոտական աշխատանքների համար վիճակագրական նպատակներով գաղտնի տվյալներից օգտվելու իրավունք ունեցող կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին»:

3.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	• «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագծի մշակում	1997թ. փետրվարի 17-ի «Եվրոհամայնքի վիճակագրության մասին» Եվրոպական խորհրդի թիվ 322/97 կանոնակարգ 1990թ. հունիսի 11-ի «Եվրոհամայնքի վիճակագրական գրասենյակին վիճակագրական գաղտնիք պարունակող տվյալների փոխանցման մասին» Եվրոպական խորհրդի (EURATOM, EEC) թիվ 1588/90 կանոնակարգ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	4-րդ եռամսյակ	36	Խորհրդատվություն
2.	«Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագծի մշակում	2002թ. մայիսի 17-ի «Եվրոպական խորհրդի թիվ 322/97/EC կանոնակարգի կիրարկման նպատակով գիտահետազոտական աշխատանքների համար վիճակագրական նպատակներով գաղտնի տվյալների մատչելիության ապահովման մասին» Եվրոպական խորհրդի թիվ 831 կանոնակարգ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն
3.	«Գիտահետազոտական աշխատանքների համար վիճակագրական նպատակներով գաղտնի տվյալներից օգտվելու	2004թ. ապրիլի 29-ի «Գիտահետազոտական աշխատանքների համար վիճակագրական	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	4-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն

	իրավունք ունեցող մարմինների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագծի մշակում	նպատակներով գաղտնի տվյալներից օգտվելու իրավունք ունեցող կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» Եվրոպական հանձնաժողովի թիվ 2004/452/EC որոշում				
ԸՆԴԱՄԵՆԸ					66	

3.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[12]

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	-	ԵՄ վիճակագրական տվյալների պահպանման և վիճակագրական գաղտնիություն համակարգի վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.)	Խորհրդատվություն

[12] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ:

4. Ժողովրդագրական և սոցիալական վիճակագրություն (աշխատուժի շուկա)

Ներածություն

Աշխատանքի շուկային վերաբերող ՀՀ օրենսդրությունը բովանդակային առումով ընդհանուր առմամբ համապատասխանում է ԵՄ օրենսդրությանը, սակայն չեն համապատասխանում ԵՄ և ՀՀ նորմատիվ իրավական ակտերի ներկայացման ձևաչափերը:

Աշխատանքի շուկայի կտրվածքով ԵՄ օրենսդրությունը կանոնակարգում է ԵՄ տարածքում աշխատուժի ընտրանքային հետազոտության կազմակերպման հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև սահմանում է եկամուտների կառուցվածքի և բաշխման վիճակագրության վարման կարգը:

Հայաստանի Հանրապետությունում աշխատուժի շուկայի վիճակագրության մասով նորմատիվ իրավական ակտերն են՝ «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, «Հաշվետվություն աշխատողների թվաքանակի և աշխատավարձի վերաբերյալ ձև թիվ 1-Ա (ամսական) պետական վիճակագրության հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին», «Ամփոփ հաշվետվություն աշխատողների թվաքանակի և աշխատավարձի վերաբերյալ ձև թիվ 1-Ա (ամսական) պետական վիճակագրության հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին», «Հաշվետվություն աշխատողների թվաքանակի և աշխատավարձի վերաբերյալ ձև թիվ 1-Ա (եռամսյակային) պետական վիճակագրության հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին», «Ամփոփ հաշվետվություն աշխատողների թվաքանակի և աշխատավարձի վերաբերյալ ձև թիվ 1-Ա (եռամսյակային) պետական վիճակագրության հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին», «Հաշվետվություն աշխատողների թվաքանակի և աշխատավարձի վերաբերյալ ձև թիվ 1-Ա (տարեկան) պետական վիճակագրության հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշումները:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ չնայած ՀՀ օրենսդրությունում համանման իրավական ակտերի բացակայությանը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից (ԵՄ TACIS ծրագրի օժանդակությամբ) պարբերաբար իրականացվում են աշխատուժի, այդ թվում՝ մանկական աշխատուժի մասին ընտրանքային հետազոտություններ: ՀՀ-ում իրականացվող նման հետազոտություններում հասկացությունների մեկնաբանությունները հիմնականում համապատասխանում են միջազգայնորեն ընդունված աշխատուժի վերաբերյալ սահմանումներին, ներկայացված մեթոդադաբանությունը հիմնված է միջազգայնորեն ընդունված չափանիշների վրա (օր. NACE, ISCO-88, ICSE-93), սակայն ՀՀ ԱՎԾ-ն դրանք չի կանոնակարգել համապատասխան իրավական ակտերով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Ժողովրդագրական և սոցիալական վիճակագրություն (աշխատուժի շուկա)» ենթագլուխը մինչև 2009 թվականը ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2008 թվական

ՀՀ-ում աշխատուժի շուկայի ընտրանքային հետազոտության կազմակերպման և արդյունավետ իրականացման համար Խորհուրդը կմշակի «ՀՀ տարածքում աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտության կազմակերպման մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագիծ՝ համապատասխանեցնելով այն 1998թ. մարտի 9-ի թիվ 577, 2000թ. սեպտեմբերի 7-ի թիվ 1897, 1998թ. հուլիսի 20-ի թիվ 1571, 2002թ. նոյեմբերի 28-ի թիվ 2104, 2003թ. փետրվարի 10-ի թիվ 246, 2000թ. հուլիսի 19-ի թիվ1575 ԵՀ կանոնակարգերին:

4.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2008			
1.	«ՀՀ տարածքում աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտության կազմակերպման մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագծի մշակում	1998թ. մարտի 9-ի «Եվրոհամայնքի տարածքում աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտության կազմակերպման մասին» Եվրոպական խորհրդի թիվ 577/98 կանոնակարգ՝ 2000թ. սեպտեմբերի 7-ի «Եվրոպական խորհրդի 577/98 Եվրոհամայնքի տարածքում աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտության կազմակերպման վերաբերյալ կանոնակարգի կիրառման մասին՝ կապված գործազրկության գործառնական սահմանման հետ» Եվրոհանձնաժողովի թիվ 1897/2000 կանոնակարգ 1998թ. հուլիսի 20-ի «Եվրոհամայնքի տարածքում աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտությունների կազմակերպմանը վերաբերող (EC) թիվ 577/98 կանոնակարգի կիրառման մասին» Եվրոհանձնաժողովի թիվ 1571/98 կանոնակարգ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	2-րդ եռամսյակ	45	Խորհրդատվություն

		2002թ. նոյեմբերի 28-ի «Եվրոհամայնքի տարածքում աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտության կազմակերպման վերաբերյալ Եվրոպական խորհրդի (EC) թիվ 577/98 կանոնակարգը, ինչպես նաև Եվրոպական Խորհրդի (EC) թիվ 577/98 Կանոնակարգը կիրառելու վերաբերյալ Եվրոհանձնաժողովի (EC) թիվ 1575/2000 կանոնակարգը ադապտացնելու վերաբերյալ» Եվրոհանձնաժողովի թիվ 2104/2002 կանոնակարգ 2003թ. փետրվարի 10-ի «Եվրոպական խորհրդի (EC) թիվ 577/98 կանոնակարգով աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտության հետ կապված 2004-2006 թթ-ի համար ըստ պահանջի մոդուլների ծրագիրը ընդունելու վերաբերյալ» Եվրոհանձնաժողովի թիվ 246/2003 կանոնակարգ 2000 թ հուլիսի 19-ի «Եվրոպական խորհրդի (EC) թիվ 577/98 Եվրոհամայնքի տարածքում աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտության կազմակերպման վերաբերյալ կանոնակարգի կիրառման				

		մասին՝ կապված 2001 թ-ից հետո փոխանցվող տվյալների կոդավորման հետ» Եվրոհանձնաժողովի թիվ 1575/2000 կանոնակարգ				
ԸՆԴԱՄԵՆԸ					45	

4.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[13]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն		ԵՄ աշխատուժի ընտրանքային հետազոտության կազմակերպման վերաբերյալ դասընթաց (5 օր / 2008թ.)	Խորհրդատվություն

[13] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

5. Մակրոտնտեսական վիճակագրություն (տարեկան տնտեսական հաշիվներ)

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում մակրոտնտեսական վիճակագրության վարման համար կիրառվում է Ազգային հաշիվների SNA-93 համակարգը, որին Հայաստանն անցում է կատարել 1993 թվականին: Այս համատեքստում Եվրամիությունում կիրառվում է Ազգային հաշիվների ESA-95 համակարգը, որը հիմնված է SNA-93 համակարգի հիմնական սկզբունքների վրա, սակայն ունի առանձնահատկություններ՝ կապված որոշ հաշիվների ավելի մանրամասն մեկնաբանության հետ: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ԵՄ պահանջներին, այնուամենայնիվ, ԵՄ-ում անցումը հիշյալ համակարգին, ինչպես նաև կիրառվող մեթոդաբանության նկարագրությունը տրված են առանձին կանոնակարգերով, որոնք նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ, թեկուզև Ազգային հաշիվների համակարգի կիրառման փաստը ամրագրված է «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքում (հոդված 5-ի «ե» կետ) և ԱՎԾ-ի գործունեության եռամյա ծրագրերում: Այսինքն՝ հիմնական խնդիրն իրավական նորմերի ներկայացման և կիրառման ձևաչափերի տարբերության մեջ է:

Տարեկան տնտեսական հաշիվներին վերաբերող մակրոտնտեսական վիճակագրության Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է ԵՄ տարածքում ազգային հաշիվների համակարգի ներդրման և գործնականում կիրառման հիմնահարցերը:

Այս բնագավառը կանոնակարգող ՀՀ հիմնական նորմատիվ իրավական ակտերն են «Պետական վիճակագրության մասին»[14], «Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին»[15] ՀՀ օրենքները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Մակրոտնտեսական վիճակագրություն (տարեկան տնտեսական հաշիվներ)» ենթագլուխը մինչև 2009 թվականը ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2009 թվական

Ազգային հաշիվների բնագավառում ՀՀ օրենսդրությունը ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով Խորհուրդը կմշակի «ՀՀ տարածքում Եվրոպական ազգային և տարածքային հաշիվների համակարգի (ESA 95) ընդունման և կիրառման մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագիծ՝ հիմք ընդունելով 1996թ. հունիսի 25-ի թիվ 2223, ԵՀ կանոնակարգը:

[14] ՀՕ-48, 04.04.2000թ.:
[15] ՀՕ-28, 25.12.2003թ.:

5.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2009			
1.	«ՀՀ տարածքում Եվրոպական ազգային և տարածքային հաշիվների համակարգի (ESA 95) ընդունման և կիրառման մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագծի մշակում	1996թ.հունիսի 25-ի «Համայնքում Եվրոպական ազգային և տարածքային հաշիվների համակարգի մասին» Խորհրդի թիվ 2223 կանոնակարգ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ)	2-րդ եռամսյակ	48	Խորհրդատվություն

ԸՆԴԱՄԵՆԸ					48	

5.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[16]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն		Եվրոպական ազգային և տարածքային հաշիվների համակարգի (ESA 95) ընդունման և կիրառման վերաբերյալ դասընթաց (7 օր / 2009թ.)	Խորհրդատվություն

[16] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

6. Մակրոտնտեսական վիճակագրություն (գներ)

Ներածություն

Հայաստանում սպառողական գների (ՍԳԻ) դասիչի հաշվարկման մեթոդաբանությունը և ընթացակարգը կանոնակարգվում են SNA-93 և SDDS համակարգերի միջոցով, որոնց դրույթները հիմնականում համապատասխանում են ԵՄ հիշյալ կանոնակարգի դրույթներին: Սակայն ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ որևէ նորմատիվ իրավական ակտ, որով ամրագրվում են ՍԳԻ հաշվարկման մեթոդաբանությունը և ընթացակարգը: Այնինչ այս բնագավառում ԵՄ-ում գոյություն ունեն 11 կանոնակարգեր, որոնք համապարփակ ձևով ընդգրկում են ՍԳԻ-ին վերաբերող հիմնախնդիրները[17]:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Մակրոտնտեսական վիճակագրություն (գներ)» ենթագլուխը մինչև 2009 թվականը ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2009 թվական

Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների դասիչի հաշվարկման հետ կապված հիմնախնդիրները ԵՄ չափանիշներին համահունչ դարձնելու նպատակով կմշակվի «ՀՀ սպառողական գների դասիչի հաշվարկման մեթոդաբանության և դրա կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագիծ, որի հիմքում ընկած կլինեն 1995թ. հոկտեմբերի 25-ի թիվ 2494, 1996թ. սեպտեմբերի 9-ի թիվ 1749, 2001թ. և 1996թ. նոյեմբերի 20-ի թիվ 2214 կանոնակարգերի հիմնական սկզբունքները:

[17] 1998թ. դեկտեմբերի 9-ի Եվրոպական հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2646՝ 1995թ. հոկտեմբերի 23-ի «Եվրոպական Խորհրդի թիվ 2494 կանոնակարգի իրականացման վերաբերյալ սպառողական գների ներդաշնակեցված դասիչում սակագների հստակ սահմանումն ապահովելու մասին», 1996թ. սեպտեմբերի 9-ի Եվրոպական հանձնաժողովի կանոնակարգ թիվ 1749՝ «Սպառողական գների ներդաշնակեցված դասիչին առնչվող Եվրոպական խորհրդի 1995թ. հոկտեմբերի 23-ի թիվ 2494 կանոնակարգի իրականացման նախնական միջոցառումների վերաբերյալ», 1996թ. նոյեմբերի 20-ի Եվրոպական խորհրդի կանոնակարգ թիվ 2214՝ «Սպառողական գների ներդաշնակեցված դասիչի վերաբերյալ՝ ՍԳՀԻ ենթադասիչների փոխանցման և տարածման մասին»:

6.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2009			
1.	«ՀՀ սպառողական գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության և դրա կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նածագծի մշակում	1995թ.հոկտեմբերի 23-ի «Սպառողական գների հարմոնիզացված ինդեքսի վերաբերյալ Եվրոպական Խորհրդի թիվ 2494/95 կանոնակարգ 1996թ. սեպտեմբերի 9-ի «Սպառողական գների հարմոնիզացված ինդեքսին առնչվող Եվրոպական խորհրդի 1995թ. հոկտեմբերի 23-ի թիվ 2494 կանոնակարգի իրականացման նախնական միջոցառումների վերաբերյալ» Եվրոպական հանձնաժողովի թիվ 1749/96 կանոնակարգ 1996թ. նոյեմբերի 20-ի «Սպառողական գների հարմոնիզացված ինդեքսի վերաբերյալ՝ ՍԳՀԻ ենթաինդեքսների փոխանցման և տարածման մասին» Եվրոպական խորհրդի թիվ 2214/96 կանոնակարգ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	1-ին եռամսյակ	79	Խորհրդատվություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		79	

6.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[18]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն		ԵՄ սպառողական գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության և դրա կիրարկման վերաբերյալ դասընթաց (7 օր / 2009թ.)	Խորհրդատվություն

[18] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

7. Բիզնես վիճակագրություն (կառուցվածքային բիզնես վիճակագրություն, արդյունաբերական արտադրանքի վիճակագրություն) [19]

Ներածություն

ՀՀ օրենսդրությունն այս բնագավառում ընդհանուր առմամբ համապատասխանում է ԵՄ օրենսդրությանը:

Բիզնես վիճակագրությանը վերաբերող Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է արդյունաբերական ձեռնարկությունների շրջանում հետազոտությունների անցկացման ընթացակարգերը, սահմանում է արդյունաբերական արտադրանքի դասակարգման սկզբունքները և կանոնակարգում է պողպատի արտադրության վիճակագրության վարման հիմնահարցերը:

Հիշյալ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են վիճակագրության բնագավառում «արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգչի :

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում չկա արդյունաբերության արտադրության ճյուղերի պարբերաբար ուսումնասիրությունը կարգավորող առանձին իրավական փաստաթուղթ[20]: Չնայած այն հանգամանքին, որ արտադրանքի դասակարգման ոլորտում ԵՄ և ՀՀ օրենսդրությունների միջև չկա «տարաձայնություն», այնուամենայնիվ, իրավական ակտերի ձևաչափերը տարբերվում են[21]:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Բիզնես վիճակագրություն (կառուցվածքային բիզնես վիճակագրություն, արդյունաբերական արտադրանքի վիճակագրություն)» ենթագլուխը մինչև 2009 թվականը ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական ձեռնարկությունների շրջանում հետազոտությունների անցկացման կարգի հաստատման և դրանց իրականացման արդյունավետության ապահովման նպատակով կմշակվեն «ՀՀ տարածքում արդյունաբերության բնագավառում հետազոտության անցկացման կարգը հաստատելու մասին»

2008 թվական

Հիշյալ տարում կմշակվի «ՀՀ տարածքում արդյունաբերության բնագավառում հետազոտության անցկացման կարգի կիրառման մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշումների նախագծեր, որոնք կհիմնվեն 1991թ. դեկտեմբերի 19-ի թիվ 3924 և 2004թ. ապրիլի 29-ի թիվ 912 կանոնակարգերի վրա:

---

[19] Բիզնես վիճակագրության ոլորտի տնտեսության ճյուղերին (բացի արդյունաբերությունից) վերաբերող վիճակագրությունը կարգավորող ԵՄ ակտերը և Հայաստանի համապատասխան օրենսդրության համապատասխանության աստիճանի վերլուծությունը սույն ծրագրի շրջանակներում չի քննարկվել, քանի որ այդ ոլորտը ինտեգրացման ներկա փուլում գերակայություն չի համարվել:

[20] 1991թ. դեկտեմբերի 19-ի Եվրոպական խորհրդի կանոնակարգ թիվ 3924՝ «Համայնքում արդյունաբերության բնագավառում հետազոտության հիմնման վերաբերյալ»:

[21] 2003թ. դեկտեմբերի 23-ի Եվրոպական հանձնաժողովի կանոնակարգ թիվ 210՝ «Խորհրդի թիվ 3924/91 կանոնակարգի համաձայն՝ արդյունաբերական արտադրանքի դասակարգման (Prodcom list) վերաբերյալ»:

7.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
2007						
1.	«ՀՀ տարածքում արդյունաբերության բնագավառում հետազոտության անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նածագծի մշակում	1991թ. դեկտեմբերի 19-ի «Եվրոպական համայնքում արդյունաբերության բնագավառում հետազոտության հիմնման վերաբերյալ» Եվրոպական խորհրդի թիվ 3924 կանոնակարգ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	3-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					15	
2008						
2.	«ՀՀ տարածքում արդյունաբերության բնագավառում հետազոտության անցկացման կարգի կիրառման մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նածագծի մշակում	2004թ. ապրիլի 29-ի «Եվրոհամայնքի տարածքում արդյունաբերության վերաբերյալ հետազոտության անցկացման մասին Եվրոպական Խորհրդի (EC) No 3924/91 կանոնակարգի կիրառման մասին» Եվրոհանձնաժողովի թիվ 912/2004 կանոնակարգ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					15	
ԸՆԴԱՄԵՆԸ					30	

7.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[22]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն		ԵՄ տարածքում արդյունաբերության բնագավառում հետազոտության անցկացման և նախապատրաստան վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.)	Խորհրդատվություն

[22] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ:

8. Արժութային, ֆինանսական, առևտրի և վճարային հաշվեկշռի վիճակագրություն (ապրանքների առևտուր)

Ներածություն

Արտաքին առևտրի վիճակագրության վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ կան առանցքային դրույթներ, որոնք, ըստ էության, համահունչ են ԵՄ օրենսդրությանը: Դրանք մասնավորապես վերաբերում են արտաքին առևտրի ոլորտում վիճակագրության վարման մեթոդաբանական սկզբունքներին, արտաքին առևտրի վիճակագրության վարման համար հիմք հանդիսացող տեղեկատվական շտեմարանի առկայությանը, վիճակագրական գաղտնիքի պահպանմանը և տարածմանը:

Ապրանքների առևտրի վիճակագրության Եվրամիության օրենսդրությունը կանոնակարգում է ԵՄ պետությունների միջև, ինչպես նաև ԵՄ և երրորդ երկրների միջև արտաքին առևտրի վիճակագրության վարման գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում նշված բնագավառը կանոնակարգող հիմնական նորմատիվ իրավական ակտերն են՝ «Պետական վիճակագրության մասին», «Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքները, ՀՀ մաքսային օրենսգիրքը[23] (հոդված 179), «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման մասին» և «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ-ի որոշումները, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առնթեր մաքսային պետական կոմիտեի ընդունած «ՀՀ մաքսային սահմանով փոխադրվող ապրանքների բեռնային մաքսային հայտարարագրման՝ ըստ բացթողման մաքսային ռեժիմների բեռնային մաքսային հայտարարագրի լրացման կարգը հաստատելու մասին» հրամանը[24]:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ որոշ հասկացությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունում չեն տրվում հստակ սահմանումներ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Արժութային, ֆինանսական, առևտրի և վճարային հաշվեկշռի վիճակագրություն (ապրանքների առևտուր)» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին :

2007 թվական

Հայաստանի Հանրապետությունում արտաքին առևտրի վիճակագրության վարման գործընթացը կատարելագործելու և ԵՄ չափանիշներին համահունչ դարձնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև կմշակվեն «ՀՀ տարածքում արտաքին առևտրի վիճակագրության կարգը սահմանելու մասին» և «ՀՀ տարածքում արտաքին առևտրի վիճակագրության կարգի կիրառման ապահովման մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշումների նախագծեր, որոնք հիմնված կլինեն 1995թ. մայիսի 22-ի թիվ 1172 և 2000թ. սեպտեմբերի 7-ի թիվ 1917 կանոնակարգերի սկզբունքների վրա:

[23] ՀՕ-83, 06.07.2000թ.:
[24] 71-ՄՎՐ, 12.06.1998թ.:

8.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	• «ՀՀ տարածքում արտաքին առևտրի վիճակագրության կարգը սահմանելու մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագծի մշակում • «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1995թ. մայիսի 22-ի «Երրորդ երկրների միջև Համայնքի և անդամ երկրների արտաքին առևտրի վիճակագրության վերաբերյալ» Եվրոպական խորհրդի թիվ 1172/95 կանոնակարգ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ)	2-րդ եռամսյակ	21	Խորհրդատվություն
2.	«ՀՀ տարածքում արտաքին առևտրի վիճակագրության կարգի կիրառման ապահովման մասին» ՀՀ վիճակագրական պետական խորհրդի որոշման նախագծի մշակում	2000թ. սեպտեմբերի 7-ի «Արտաքին առևտրի վիճակագրությանը վերաբերող Եվրոպական Խորհրդի 1995թ. մայիսի 22-ի թիվ 1172 կանոնակարգի դրույթների իրականացմանն ուղղված» Եվրոպական հանձնաժողովի թիվ 1917/2000 կանոնակարգ	ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե (ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն հետ համատեղ)	2-րդ եռամսյակ	45	
			ԸՆԴԱՄԵՆԸ		66	

8.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[25]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե		ԵՄ տարածքում արտաքին առևտրի վիճակագրության կանոնակարգման և դրա մեթոդաբանության վերաբերյալ դասընթաց (7 օր / 2007թ.)	Խորհրդատվություն

[25] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ